



ՆԱԽԱՐԱՐ

MINISTER

«17»06..... 2006թ.

010711254-16

ՔՈՒԷՅԹԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ՅԻՍՆԱՄԵԱՅ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻՆ

Միրելի հայրենակիցներ

Ջերմօրէն կ'ողջունեմ Ձեզ եւ Քուէթի համայնքի բոլոր գաւակները՝ որոնք ջանք ու եռանդ չեն խնայեր համայնքը հայ պահելու եւ Հայաստան-Սփիւոք կապերը ամրապնդելու համար:

Անկասկած անուրանալի է Քուէթի ազգային վարժարանի դերը՝ երիտասարդութեան հայեցի դաստիարակութեան եւ հայ մշակոյթի ծաղկման ու ծանօթացման աշխատանքներուն մէջ: Բարձր կը գնահետեմ Ձեր վարժարանի անցած յիսնամեայ ճանապարհը՝ որ անժխտելի դեր ունեցաւ եւ պիտի շարունակէ ունենալ քուէթահայութեան ազգային դիմագիծի պահպանման առումով:

Ուրախալի փաստ է՝ որ ծրագրած էք մեծ շուքով նշել Քուէթի ազգային վարժարանի յիսնամեակը եւ շատ շնորհակալ եմ այդ առիթով զիս հրաւիրելու համար:

Քաջ գիտակցելով Սփիւոքի նախարարի ներկայութեան կարեւորութիւնը նման հանդիսութեան՝ անպայման կը փորձեմ ներկայ գտնուիլ՝ հպարտութիւն եւ բերկրանք ներշնչող այդ առիթի տօնակատարութեան:

Մէկ անգամ եւս շնորհակալութիւն կը յայտնեմ հրաւերի համար:

Միրով՝

Հրանոյշ Յակոբեան